Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների խորհրդի կողմից
27.11.2024թ.

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «ԶՊՄԿ» կամ «Ընկերություն») ձգտում է զարգացնել օրենքի շրջանակներում ազնիվ, բարեխիղճ և անաչառ ձեռնարկատիրական գործունեության իրականացման մշակույթ: Միևնույն ժամանակ, Ընկերությունը գիտակցում է, որ գործունեության ընթացքում կարող են լինել անօրինական, անբարեվարք՝ ընդհուպ մինչև հանցավոր վարքագծի ռիսկեր: Ի պատասխան այդ ռիսկերի, Ընկերությունը ձգտում է խթանել թափանցիկության և հաշվետվողականության մշակույթ, որում աշխատակիցները, կապալառուները, մատակարարները և շահագրգիռ այլ կողմերը հնարավորություն ունեն անանուն կերպով բարձրաձայնել իրենց մտահոգությունները հնարավոր անօրինական, անբարեվարք կամ վտանգավոր վարքագծի կամ գործելակերպերի վերաբերյալ:

Սույն Քաղաքականությունը վերաբերում է ԶՊՄԿ Տնօրենների խորհրդին, Ընկերության ամբողջ անձնակազմին, ներառյալ՝ բարձրագույն ղեկավար կազմը, ինչպես նաև Ընկերության կապալառուներին, գործընկերներին, հյուրերին և այցելուներին այնքանով, որքանով կիրառելի է:

Սույն Քաղաքականության շրջանակում բարձրաձայնվող մտահոգությունների ոչ սպառիչ ցանկը ներառում է՝

- անօրինական, խարդախ կամ կոռուպցիոն գործունեությունը:
- էթիկայի կանոններին չհամապատասխանող վարքագիծը կամ ԶՊՄԿ-ի Վարքագծի կանոնակարգի, քաղաքականությունների և ստանդարտների կոպիտ խախտումները:
- անձանց կամ շրջակա միջավայրին վնաս պատճառող կամ դրա սպառնալիք ստեղծող վարքագիծը:
- Ընկերությանը և/կամ Ընկերության հեղինակությանը վնաս պատճառող կամ դրա սպառնալիք ստեղծող վարքագիծը:
- աշխատավայրում բռնությունը, ոտնձգությունը, խտրականությունը, կամ հաշվեհարդարը:
- մարդու իրավունքների խախտումը:
- օրենքին հակասող ցանկացած խախտումը կամ անօրինական վարքագիծը, որը կարող է ազդել Ընկերության ձեռնարկատիրական գործունեության վրա:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- ապահովում է Ընկերության գործունեության համապատասխանությունը ՀՀ և միջազգային կիրառելի օրենսդրությանը, դրանցով սահմանվող չափանիշներին:
- խրախուսում է Ընկերության կամ Ընկերության որևէ աշխատակցի վարքագծի կամ գործունեության վերաբերյալ մտահոգության մասին ցանկացած բարձրաձայնում, եթե այդ վարքագիծը կամ գործունեությունը կարող է վնաս պատճառել կամ այդպիսի սպառնալիք ստեղծել ԶՊՄԿ-ի, ԶՊՄԿ-ի աշխատակիցների, այլ շահագրգիռ կողմերի կամ հասարակության անդամների և/կամ նրանց հեղինակության համար:
- կիրառում է մտահոգությունների մասին բարձրաձայնման համար հասանելի, ապահով և գաղտնիությունն ապահովող համակարգեր՝ համաձայն Ազդարարման ընթացակարգի:
- պարտավորվում է չհրապարակել ազդարարողի ինքնությունն առանց նրա նախնական գրավոր համաձայնության, բացառությամբ օրենքով նախատեսված և իրավապահ մարմիններին ներգրավելու անհրաժեշտ դեպքերի (1):
- ապահովում է ազդարարման թղթային և էլեկտրոնային օրինակների պատշաճ պահպանումը, դրանք հասանելի դարձնելով միայն ազդարարման քննությանը ներգրավված անձանց:
- եթե ազդարարողը գործել է բարեխղճորեն, անկախ նրա արտահայտած մտահոգության վերաբերյալ հետագա քննության արդյունքներից՝ միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու ազդարարողին՝ ազդարարման հետևանքով առաջացող անբարենպաստ հետևանքներից և/կամ գործողություններից (2):
- բոլոր աշխատակիցների համար անցկացնում է ուսուցում՝ նրանց սույն Քաղաքականությանը և Ազդարարման ընթացակարգին ծանոթացնելու, ինչպես նաև դրանց շրջանակներում իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:
- տրամադրում է անհրաժեշտ միջոցներ սույն Քաղաքականության կիրառման համար:
- պարբերական աուդիտների և վերանայումների շրջանակներում գնահատում է սույն Քաղաքականության կիրառման արդյունքներն ու ցուցանիշները, բացահայտում է դրանց բարելավման ուղղությունները:
- Ի լրումն սույն Քաղաքականության, Ընկերությունը կհաստատի Ազդարարման ընթացակարգ, որով կկարգավորվեն ազդարարման կարգը ու դրանց քննության փուլերը:

Ի լրումն սույն Քաղաքականության, Ընկերությունը կհաստատի Բողոքների դիտարկման ընթացակարգ, որով կկարգավորվեն բողոքների ներկայացման կարգը ու դրանց քննության փուլերը:

Հրապարակման ամսաթիվը 25.12.2024թ.

Հեղինակ և նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան
Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան

Tel: +374-60-500003, +374-285-33131
Email: info@zcmc.am

(1) Հազվադեպ դեպքերում հնարավոր չէ ապահովել ամբողջական գաղտնիություն, օրինակ, եթե հետագա փուլերում անհրաժեշտ է ներգրավել իրավապահ մարմիններին: Այս դեպքում ԶՊՄԿ-ն կգործադրի բոլոր ջանքերը՝ սատարելու և պաշտպանելու ազդարարողին: Ազդարարողի ինքնության չարտոնված բացահայտումը կամ որևէ տեղեկություն, որը կարող է հանգեցնել նրա նույնականացմանն առանց ազդարարողի համաձայնության, համարվում է կարգապահական խախտում, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև հանցանք:

(2) Անբարենպաստ հետևանքների կամ գործողությունների օրինակ են աշխատանքից ազատումը կամ պաշտոնի իջեցումը, կարգապահական տույժի կիրառումը, ցանկացած խտրականություն, ոտնձգություն, կողմնակալություն, սպառնալիքների կամ ահաբեկման դրսևորումը, ազդարարողի գույքին, հեղինակությանը, բիզնեսին կամ ֆինանսական վիճակին վնաս պատճառելը կամ դրանց փորձը՝ կապված ազդարարման հետ (ինչպես անձամբ ազդարարի, այնպես էլ նրա ընտանիքի անդամների հանդեպ):